Lkn
2216

1913

230

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

# ՀԱՇՒՒ

## ՔԱՄՈՅԵԱՆՑ ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ

## ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ

## 1912 Թ.

## ԵՒ ՆԱԽԱՀԱՇԻՒ 1913 Թ.

Թ ի ֆ լ ի ս
Տպարան «Հ Ե Ր Մ Է Ս» Գոլովինսկայա փող., № 6. Հեռախօս № 566.
1913

ԼԷՌ
2216

1999

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

# ՀԱՇԻՒ

## ՔԱՄՈՅԵԱՆՑ ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑՒՈՅ

## ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ

## 1912 Թ.

## ԵՒ ՆԱԽԱՀԱՇԻՒ 1913 Թ.

Հ.Ս.Ս.Հ. ...
ГОС. БИБЛИОТЕКА
ЗАКП.-АРМ. ССР
ИМ. А. МЯСНИКЯНА

28058-62

Թ ի ֆ լ ի ս
Տպարան «Հ Ե Ր Մ Է Ս» Գոլովինսկայա փող., № 6. Հեռախօս № 566.
1913

43990-Ա-Լ.

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

## Քամոյեան—Ս. Գէորգ եկեղեցու հոգաբարձութեան 1913 թ. գործունէութեան

Հոգաբարձութիւնս իր ընտրութեան առաջին օրից և եթ՝ նպատակ էր դրել, ինչ կերպով էլ լինի, վերջացնել եկեղեցու շինութիւնը: Եւ ինչպէս արդէն տեսնում էք, այս տարւայ գրեթէ սկզբից այդ նպատակը լիովին իրագործել է: Թէ ինչպիսի դժւարութիւնների և արգելքների առաջ էր կանգնել հոգաբարձութիւնս իր այդ նպատակին հասնելու համար, յարգելի ծխականները դրա հետ կը ծանօթանան տեղեկագրիս ամբողջ ընթացքում:

Անշուշտ, ոչ մի ծխական չի բացասի այն հանգամանքը, որ երբ հոգաբարձութիւնս իր ձեռքն առաւ ծխական բոլոր գործերի ղեկավարութիւնը, եկեղեցու սնդուկը ոչ թէ միայն զուրկ էր որևէ կապիտալից, այլ և մօտ 11,000 րուբլու պարտքով ծանրաբեռնւած էր: Հոգաբարձութեանս բաժին էր ընկած. ուրեմն, և՛ պարտքերը վճարել և թէ նոր գումարներ ստեղծելով՝ ծխական գործերն առաջ մղել:

1. Քամոյեան եղբայրների նւիրատւութիւնը.

Ինչպէս մեր նախորդ զեկուցումից յայտնի է, հոգաբարձութիւնս տարւայ սկզբին Քամոյեան եղբայրների հետ վերջնական համաձայնութեան գալով՝ խոստացւած նւիրատւութիւնից արդէն ստացել էր 2000 րուբլի, այժմ էլ պարտք ենք համարում յայտնել, որ Քամոյեան եղբայրները մնացեալ 2600 ր. իր ժամանակին մտցրին հոգաբարձութեանս գանձարանը: Բացի այդ, պ. Յովհաննէս Քամոյեանը, իր վաղամեռիկ կնոջ յիշատակի յաւերժացման համար, խոստացել է իւրաքանչիւր տարի վճարել մեր դպրոցին մի 100 ր.: Իսկ եղբայրք Քամոյեաններն էլ իրանց հանգուցեալ մօր յիշատակին վճարեցին միանւագ մի հարիւր րուբլի, որպէս յաւելեալ գումար սեղանի նկարին:

Հոգաբարձութիւնս ի՛ նկատի ունենալով այս բոլորը, որոշեց Խաչկալի ու Տիրամօր պատկերի վրայ մակագրել տալ բարեպաշտ նւիրատուների անունները, ապա և խնդիրքով միջնորդել Վեհափառ Հայրապետի մօտ, որ Իր օրհնութեան կոնդակը չը զլանայ Քամոյեան եղբայրներին (Սոյն հարցերին նւիրւած է 9 նիստ):

2216-60

2) Եղբարք Բոզարջեանների նուիրատուութիւնը.

Յարգելի ծխականներին յայտնի է նաև եղբ. Բոզարջեանների
նուիրատուութեան մասին, որոնք իրանց նուիրելիք գումարի մեծ մասը
անցեալ տարի վճարելուց յետոյ, մնացեալն էլ տարւոյս սկզբներին
բարի եղան մուցնել հոգաբարձութեանս սնդուկը:

Եղբարք Բոզարջեանների այդ նուիրատուութեանը փոխարէն,
հոգաբարձութիւնս, համաձայն ծխակ. վերջին ընդհ. ժողովի որոշման,
եկեղեցուս հարաւային պատի արտաքին երեսի վրայ զետեղեց մի մար-
մարեայ ոսկեզօծ արձանագրութիւն՝ յանուն Բոզարջեան եղբայրների-
բացի այդ, Հոգ-նըս այս առթիւ էլ որոշել է միջնորդել Վեհափառ
Հայրապետի առաջ՝ խնդրելով Իր Հայրական Օրհնութեան կոնդակը նաև
Բոզարջեան եղբայրների համար:

Հոգաբարձութիւնս իր կողմից գտնելով թէ Քամոյեան և թէ
Բոզարջեան եղբայրների նուիրատուութիւնները միանգամայն տեղին և
արժանի բարոյական գնահատութեան՝ յայտնում է հրապարակաւ յարգե-
լի նուիրատուներին իր խորին շնորհակալութիւնները:

3) Գ. Արաֆելեանի նուիրատուութեան հարցը. — Համաձայն
Հոգաբարձութեանս 1912 թ. Յունիսեան ծխ. ընդհ. ժողովին տուած զե-
կուցման, յայտնի է, որ դեռ ևս նախորդ հոգաբարձութեան օրով սկսած
բանակցութիւնները Գրիգոր Մարտինիչ Արաֆելեանի հետ, մենք շա-
րունակեցինք, ապա ծխկ. ընդհ. ժողովի կողմից ընտրուած յատուկ Մաս-
նախումբը հոգաբարձութեանս հետ, նախագահութեամբ պ. Վ. Եղիա-
զարեանի, և մասնակցութեամբ յատուկ հրաւիրուած ինժեներների ու
նկարիչների՝ կայացրեց երկու նիստ, որի ընթացքում տեղն ու տեղը
քննելով Արաֆելեանցի և հոգաբարձութեանս կողմից առաջարկուած
պայմանները, Յանձնախումբը, որպէս լիազօր մարմին՝ տուեց իր վեր-
ջնական որոշումները, որի համաձայն էլ հոգաբարձութիւնս հարկ ե-
ղած պաշտօնական պայմանագիրը պատրաստելով՝ ներկայացրել է պ.
Գ. Արաֆելեանին, որը վերջնականապէս ընդունելով այն՝ կարգադրել
է իր կառավարիչ պ. Մ. Կաֆեանցին՝ վճարել իր խոստացած նուիրատը-
ւելիք գումարը, որը և լրիւ ու շնորհակալութեամբ ստացել է իր ժա-
մանակին: (Արաֆելեանի նուիրատուութեան գործի Յանձնախմբի արձա-
նագրութիւններն ու պայմանագիրը առանձին կազմած ու ստորագրուած
են: Սոյն հարցերին նուիրուած են 9 Հոգաբ. հերթական և 2 էլ Յանձնա-
խմբի նիստեր):

4) Երգեցիկ խմբի մասին: Հոգաբարձութիւնս նկատի ունենա-
լով, որ Նորակառոյց եկեղեցու արտաքին վայելչութեան հետ հարկ
անհրաժեշտ էր և երաժշտութեան գեղարուեստականութեան մասին ուշք
դարձնել, որով միայն հնարաւոր էր լինելու գրաւել բազմաթիւ ժամա-
ւորների, ուստի վճռեց պահել մշտական սեփական երգեցիկ խումբ:
Սկզբում հոգ-ըս աշխատել է Ներսիսեան դպրոցի քառաձայն խումբը
հրաւիրել, բայց այդ հնարաւոր չի եղել. ապա վերջնականօրէն կանգ է
առել Բար. Ընկ. որբանոցի երկձայն օրիորդաց խմբի վրայ, որն եր-



գելու էր պ. Սպիրիդոն Մելիքեանի ղեկավարութեամբ: Բանակցելով
Բար. Ընկ. Խորհրդի հետ, հոգաբարձութիւնս պայմանաւորուեց մի տա-
րով՝ չըհաշուած ամառուայ Յունիս, Յուլիս և Օգոստ. ամիսները: Այդ
պայմանի հիման վրայ՝ խումբը երգելու էր մեր եկեղեցում ամեն կի-
րակի և տօն օրերը, դրա փոխարէն խմբին, խմբապետին էլ միասին
հաշուած՝ տրուելու էր ամսական 80 ր.: Սոյն պայմաններով խում-
բը 1912 թ. փետրուարից սկսել է երգել՝ մի տարի պայմանով:

5) Նորակառոյց եկեղեցու անուան խնդիրը.—Հոգաբարձութիւնս
նկատի ունենալով այն բոլոր տարաձայնութիւնները, որոնք միշտ
գոյութիւն էին ունեցել մեր եկեղեցու անուան շուրջը, և որ ոմանք կոչում
էին «Տափի-Թաղի Ս. Գէորգ», կամ «Քամոյեան» և կամ «Քամոյեան-
Ս. Գէորգ». և նկատի ունենալով նաև այն, որ շուտով եկեղեցու օ-
ծումն էր կատարուելու, և որ վերջնականապէս պէտք էր որոշել եկե-
ղեցու անունը. նաև այն հանգամանքը, որ Քամոյեան եղբայրների նը-
ւիրելիք գումարը մեծ մասամբ կապուած էր եկեղեցու անուան հետ, ուս-
տի իր 12 և 13 նիստերում այդ խնդիրը լըջօրէն քննութեան նիւթ դար-
ձրեց և չընդունելով, որ յանգաւ մի որոշ եզրակացութեան, այն է՝ ընդու-
նեց «Քամոյեան-Ս. Գէորգ» անունը, սակայն չուզելով ինքնակամ ըն-
թացք տալ, որոշեց այդ խնդիրը դնել ծխական ընդհ. ժողովին և ստա-
նալ նրա հաւանութիւնը, որը և իր ժամանակին կատարուել է և եկեղե-
ցին օծուել Եփրեմ սրբազանի միջոցով՝ «Քամոյեան-Ս. Գէորգ» անուա-
նով:

6) Եկեղեցու բացման հարցը.—1912 թ. յունուարի 29-ին. հոգա-
բարձութիւնս, իր ընտրութեան պահուն հէնց, խորապէս գիտակցում էր
այն բոլոր դժուարութիւնները, որոնք իրան սպասում էին իր գործավարու-
թեան ընթացքում՝ մանաւանդ տնտեսականի կողմից: Ու հոգ-ըս գը-
տնում էր որ ծխական գործերի կանոնաւորումը բացառապէս կախուած
էր այն բանից, այսինքն եկեղեցու շինութեան աւարտումից և օր ա-
ռաջ եկեղեցին բացելուց: Առաջնորդուած այս տեսակէտից, հոգ-ըս չը
խնայեց որևէ ջանք, և գործ դնելով ամեն ճիգ՝ հարթեց բոլոր դժուա-
րութիւնները թէ տնտեսական և թէ կառավարչական ու 1912 թ. Յուն-
ւարի 29 կատարելով «Քամոյեան-Ս. Գէորգ» եկեղեցու օծումը՝ միան-
գամ ընդմիշտ նրա դռները բաց արեց ինչպէս մեր ծխականների, նոյն-
պէս և հայ հասարակութեան առաջ:

7) Եկեղեցու կրպակներից ոմանց քանդելու խնդիրը.—Ինչպէս
յայտնի է, տարիներ առաջ, եկեղեցու շինութեան սկզբին, այն ժամա-
նակուայ երեցփոխ պ. Ա. Վարդապետեանը գրաւոր պայմանագրով յանձն էր
առել եկեղեցու շինութիւնը աւարտելուց յետոյ, բացումից առաջ, քան-
դել Դիլորցովեան փողոցի վրայ գտնուած եկեղ. կալուածքից ինը (9) սա-
ժէնի չափ և շինել երկաթեայ ցանկապատ ու արտաքին մուտքը:
Հոգ-ըս նկատելով, որ անկարող է լինելու եկեղեցու բացումը
կատարել, առանց այդ օրինական պահանջին գոհացումն տալու, ուստի

քանդեց պայմանագրի մատնանշած տեղից մի մաս (2 խանութ), եկեղեցու մուտքը բացելու համար: Բայց դրանից յետոյ իշխանութիւնը գրաւոր դիմելով երեցփոխ պ. Յարութիւն Քալանթարեանին, առաջարկել էր եկեղեցու հիւս. կողմի խանութներից էլ քանդել և այն կողմից բացել գլխաւոր մուտքը, պատճառաբանելով, որ ննջեցեալների, հարսանիքների ժամանակ եկեղեցու դրան առջև հաւաքւած կառքերի և մարդկանց բազմութիւնը կըխանգարէն կարգ ու կանոնը Դվորցովայա փողոցի վրայ:

Այս առաջարկը մի անակնկալ էր հոգաբ-ըս համար և իրագործման դէպքում՝ կատարեալ մի աղէտ ծխական տնտեսական դրութեան համար, քանի որ եկեղեցու եկամուտները առնուազն կէսը պակասելու էր: Այս դէպքում հոգաբարձութեանս առաջ դրւեց երկու սուր խնդիր. առաջինը, որ պահանջումէր Դվորցովայա փողոցից քանդել այնքան, որքան սկզբնական պայմանում կար, հիւսիսային հրապարակի կողմից էլ բացել մի նոր մուտք: Հոգ-ըս այս դժարութիւնից դուրս գալու համար չը կանգնեց և ոչ մի օրինական միջոցի առաջ և թափով գործին կպած՝ խնդրեց պ. երեցփոխին հոգ-ըս կողմից ներկայանալ իշխանութեանը, ծանօթացնել նրան եկեղեցու այժմեան դրամական խիստ անձուկ կացութիւնը, ապա յայտնել, որ բոլոր կրպակները գրաւ են դրւած բանկում և աշխատել, որ իշխանութիւնը բաւականանայ 10 տարի առաջ հոգաբ. տւած խոստումով, այսինքն Դվորցովայա փողոցից 9 սաժէն քանդելով:

Հարկ եղած միջամտութիւնն ու բացատրութիւնը տալով՝ հոգ. թէև հեռացրեց խանութներին սպառնացող անմիջական վտանգը, բայց ինկատի ունենալով, որ իշխանութիւնը պնդելու է Դվորցովայա փողոցից 2 խանութ ևս անմիջապէս քանդելու մասին, որպէսզի կամարը քանդւած լինէր, և որովհետև այդ 2 խանութի կամարը շատ անհրաժեշտ էր եկեղեցուն ու դրանց քանդւելուց եկեղեցին պիտի զրկւէր այդ կարեւոր հասոյթից, մօտ 2000 րուբլի եկամուտից, ուստի Հոգ-ըս վճռեց դիմել այս խնդրի համար էլ Փոխարքային՝ ներկայացնելով միաժամանակ ցանկապատի այն նկարը, որը Հոգ-ըս յատկապէս նկարել էր տւել պ. Ա. Ֆէթվաճեանին և խնդրել, որ մեր եկեղեցու այժմեան տնտեսական ճգնաժամը ինկատի ունենալով՝ Նորին Պայծառափայլութիւնը բարեհաճի թոյլատրել կառուցելու երկաթեայ ցանկապատը և արտաքին դուռը՝ առանց քանդելու խանութները:

Իշխանութեան կողմից երկու կրկնակի կոմիսիաների քննութեան բովից անցնելուց յետոյ, հոգ-ըս այսօր, խղճի ամենայն հանգստութեամբ, կարող է յայտնել յարգելի ծխականներիդ, որ անմիջական բոլոր վտանգները անցել են, մանաւանդ՝ եթէ շտապենք ըստ ներկայացրւած պլանի շուտով կառուցանել ցանկապատն ու մուտքը: (Տես նիստ. 15. 16. 18. 19.)

8) Եկեղեցու եկամուտների կանոնաւորման խնդիրը.—Հոգաբարձութիւնս ինկատի ունենալով, որ եկեղեցին բացւելուց յետոյ աւելանալու էր



եկեղեցական եկամուտը, ուստի անհրաժեշտ գտնելով այդ եկամուտները կանոնաւորել՝ իր 15-րդ նիստում որոշեց՝ ա.) Դիմել եկեղեցու միաբաններին և առաջարկել, որ նրանք պսակի, կնունքի, դիազարդի, ջահերի և այլն հաշիւները այնուհետև կատարեն ամեն անգամ Երեցփոխի գիտութեամբ և նրանից անդորրագրեր ստանալով բ.) Ձևակերպել և տպագրել տալ յատուկ անդորրագրեր. գ) Առաջարկել միաբաններին ապրիլ ամսից սկսած զանազան արարողութիւններից ստացւած եկամուտը իւրաքանչիւր ամսի վերջին մտցնել եկեղ. գանձարանը դ.) Պսակի կամ թաղման ժամանակ վառւած ջահերին նշանակել հետևեալ նորման.—ամբողջական լուսավառութեան համար 30 ր. իսկ մէկ ջահին 5 ր. ե.) Դիազարդի, պսակի թագի վարձը թողնել ըստ կամաց:

9). Եկեղեցու պարտքերը վճարելու խնդիրը.—Հոգաբարձութիւնս իր գործավարութեան ընթացքում, ինչպէս վերևում ասւած է, չափազանց մեծ դժւարութիւնների է բախել՝ շնորհիւ եկեղեցու շինութիւնից մնացած պարտքերի, բայց և ամեն դէպքից օգտւելով՝ աշխատել է վճարել և այսպէս վերև յիշատակած նւէրները ստանալիս՝ առաջին պարտքն ենք համարել աշխատել եղած գումարը պարտապահանջների միջև այնպէս բաժանել, որ ոչ ոք զրկւած չը լինի: Այս ուղղութեամբ առաջ ընթանալով՝ հոգաբարձութեանս յաջողւեց 1912 թ. ազատել եկեղեցու շինութիւնից մնացած պարտքի մեծ մասից (8260 ր. 87 կ.) իսկ միւս մնացած մասն էլ (հետզհետէ վճարւում է. 1913 թ.): Նիստ 18. 38. 39. 41. 42:

Պարտքերը վճարելիս պարտատէրերից, պ.պ. Անդրէօլետտին, Ե. Ծատուրեանը, Կալինսկին, Բանայեօղովը և Սարգիս Յովհաննիսեանը իրենց պահանջներից՝ իբր նւէր եկեղեցու զեղջել են մօտ 1,800 րուբլի աւելի քան 200 ր. էլ 1913 թ. ընթացքում են զիջել:

10). Գանձանակի վերացման հարցը.—Հոգաբարձութիւնս ի նկատի ունենալով, որ գանձանակ ման ածելը ունի իր որոշ անյարմարութիւններն ու անպատեհութիւնները, և որի պատճառով շարունակ բողոքումներ են առաջ գալիս եկեղեցու միաբանութեան մէջ, ուստի՝ մի քանի նիստերում քննելով այդ խնդիրը՝ որոշեց ի վերջոյ համաձայն միաբանների խնդրի՝ վերացնել սովորութիւն դարձած գանձանակ ման ածելը և նրա տեղը հաստատել մի հաստատուն գանձատուփ, որից գոյացած արդիւնքը յատկացնել միաբանութեանը: Սոյն խնդիրը վերաքննելիս, սակայն, թէ Հոգ.-ըս և թէ միաբանութիւնը եկամուտի կողմից այդ անբաւարար գտան և վճռեցին ննջեցեալների, հարսանիքի այլ հասոյթների վրայ աւելացնել փոխարէն գանձանակի մի տուրք, որը և յատկացնել միաբանութեանը: Հոգաբարձութիւնս, սակայն, աչքի առաջ ունենալով խնդրի խիստ կարևորութիւնը՝ յարմար գտաւ, նախ քան գործունէութեան անցնելը՝ ընդհանուր ժողովի հաւանութիւնն ստանալ այս մասին:

11) Կրպակավարձերի աւելացման խնդիր.—Հոգաբարձութիւնս մշտապէս

հոգ է տարել զարգացնելու եկեղեցու կալուածքների վարձատրութիւնը և երբեք առիթ չի փախցրել, վարձուորների համաձայնութեամբ՝ հետզհետէ բարձրացնելու կրպակների վարձ-արժէքը: Եւ յիրաւի հոգաբարձութեանս յաջողուել է տարեկան վարձին մի որոշ գումար աւելացնել և գանձել կրպակներից, որոնց մանրամասն հաշիւը ցոյց է տրուած մեր հաշիւների մէջ: Հոգաբարձութիւնս մեր կալուածքների արժէքը բարձրացնելու խնդրին նւիրել է յատկապէս երեք՝ 22, 25 և 38 նիստերը:

12) III-րդ քահանայ հրաւիրելու հարցը.—Պէտք է ասած, որ III-րդ քահանայ ունենալու խնդիրը մեզանում առաջին անգամը չէ, որ յուզւել է. այդ խնդրով զբաղուել են նախկին հոգաբարձութիւններն էլ, ինչպէս նաև ծխական մի քանի ընդհանուր ժողովներ:

Հոգաբարձութիւնս էլ ստիպուած եղաւ այդ խնդրով զբաղուել, մանաւանդ երբ յայտնի դարձաւ մեր երկու քահանաների միջև շարունակ առաջ եկած կոնֆլիկտները այս կամ այն պատճառով: Այս առիթով հոգաբարձութիւնս ստացել էր Միք. սրկ. Տէր-Յարութիւնեանից մի գրութիւն, որով նա առաջարկում էր իրան III-րդ քահանայ ձեռնադրելու խնդիրը մտցնել ծխական ընդհանուր ժողովի (1912 թ. Յունիսի) օրակարգի մէջ: Պէտք է շեշտել, որ Տէր Յովհաննէս ա. քահանան հոգաբարձութեանս առաջարկել էր ոչ թէ զբաղուել III-րդ. քահանայի հարցով, այլ նախ II-դ քահանայի, յայտարարելով, որ ինքը այլևս անկարող էր պաշտօնավարել Տէր Յովսէփ հօր հետ, և որ այդ մասին նա դիմել էր հոգևոր Իշխանութեանը: Այդ ժամանակամիջոցում Տ. Յովսէփ հայրը կրկնակի գրութեամբ բողոք էր բարձել հոգաբարձութեանս առաջ Ախլցխայից տեղս գաղթած Տէր Աբրահամի դէմ, որը հոգ. իշխանութեան թոյլտուութեամբ, մշտապէս յաճախում էր մեր եկեղեցին և մինչև անգամ Տէր-Յովհաննէս հօր փոխարէն պատարագում. հակառակ, որ այդ իրաւունքից Տէր Աբրահամը զրկուել էր Սինոդի կարգադրութեամբ, որը և իր ժամանակին յայտարարուած է «Արարատ» ամսաթերթում պաշտօնապէս:

Տէր Յովսէփը՝ Տէր Յովհաննէս հօր վերաբերմունքը գտնում էր անարդար և յայտարարում, որ Տէր Յովհաննէսը Տէր Աբրահամին թոյլ էր տալիս պատարագել իր փոխարէն՝ դէմ գնալով Սինոդի կարգադրութեանը և որի համար ինքը խստօրէն բողոքում է: Իրերի այսպիսի դասաւորութեան ժամանակ, հոգաբարձութիւնս նկատելով, որ, յիրաւի 2 քահանաների միջև շարունակ ոչ ցանկալի տարաձայնութիւնները անպակաս են և որ III-րդ քահանան գուցէ նպաստէր այդ տխուր անտագոնիզմին վերջ տալու. միաժամանակ նկատելով, սակայն, որ համապատասխան եկեղեցու ծխերի քանակի, ըստ քահանայական շտատի 2 քահանաները բաւարար են՝ որոշեց, ա) մերժել Միքայէլ սրկ.-ի խնդիրը, քանի որ հոգևոր իշխանութիւնն իսկ մերժել էր ծխական ընդհանուր ժողովի առաջարկը՝ նրան քահանայ ձեռնադրելու մասին, պատճառաբանելով նրա ցենզ չունենալը: բ) Հոգաբարձութիւնս վերոյիշեալ տեսակէտներից առաջնորդուելով և ցանկանալով ունենալ III քահանայ, կանգ առաւ Ջգրաշէն եկեղեցու Տէր Արշ. քահանայ Մինասեանի վրայ, որը բացի իր սեփական ընտիր ծուխերն ունենալուց, և՛ համալսարական կրթութեան տէր էր, ուստի վճռեց մտնել բանակցութեան Տէր Արշակի հետ՝ այդ առթիւ, բայց ինչ-ինչ պատճառներով այդ հարցը մնաց առկախ մինչև այժմ:



13) Դպրոցի չքաւոր աշակերտուհիներին նախաճաշ տալու խնդիրը.—1912 թ-ի Նոյեմբերին դպրոցի տեսուչ պ. Գ. Վարդանեան մանկավարժական ժողովի կողմից հոգաբարձութեանս առաջարկ արեց միջոցներ գտնել և դպրոցում կազմակերպել չքաւոր երեխաների համար նախաճաշ, որին, ինչ ասել կուզէ, չափազանց մեծ կարիք կար:

Հոգաբարձութիւնս սկզբունքով համաձայնելով այդ առաջարկի հետ, միջոցներ ձեռք առաւ իրականացնելու այն, և քանի որ նախահաշւից դուրս էր լինելու այդ ծախքը, ուստի որոշեց արտակարգ միջոցների դիմել—ներկայացում, երեկոյթ կազմակերպելու: Մինչ այդ, սակայն, տեղիս ծխական դպրոցների բոլոր վարիչ մարմինների մէջ խնդիր եղաւ՝ աշխատել կազմակերպել նախաճաշ՝ բոլոր մեր ծխական դպրոցներում: Եւ քանի որ այդ խնդիրը քննւում էր ս. առաջնորդի նախագահութեամբ և հոգաբարձուների ու մանկավարժական մարմինների մասնակցութեամբ, ուստի լաւ համարեց ընդհանուրի հետ միասին ձեռնարկել, ինչպէս նախաճաշի, նոյնպէս և բժշկական հսկողութեան գործին: (Տես նիստ 38 և 40):

14) Միաբան քահանաների գործունէութիւնը.—Հոգաբարձութիւնս որպէս անմիջական պատասխանատու մարմին ծխական ժողովի առաջ, պարտք է համարում յայտնել եկեղեցու միաբանների մասին այն, որ եթէ մեր երկու քահանաները հաւասարաչափ իրանց աջակցութիւնը նւիրած լինէին հոգաբարձութեանս, այդ դէպքում եկեղեցին շատ հաւանօրէն այսօր իր ընթացիկ պարտքից ազատ կը լինէր:

Ստորև զետեղում ենք երկու միաբանների միջոցով յօգուտ եկեղեցու ստացուած մուտքը:

1912 թ. Տ. Յովհաննէս ա. քահ. միջոցով ստաց. է լուսագ. 91 ր. 60 կ.
» » » Յովսէփի միջոցով լուսագնից 378 ր. 50 կ.
» » այլ քահանաների միջոցով 131 ր. 50 կ.

Բացի այս, Տէր Յովսէփ հայրը միշտ ընդառաջ է գնացել հոգաբարձութեանս, շատ անգամ էլ ինքնաբուղխ կերպով և ահա 2—3 տարւայ ընթացքում իր գնահատելի աշխատութեամբ հետևեալ նւիրատուներին է ոգևորել և լիառատ նւէրներ ստացել յօգուտ եկեղեցու:

Տէր Յովսէփի միջոցով ստացուած նւէրները.

Հանգուցեալ Բոզարջեանից 300 ռուբ.
Նղբ. Բոզարջեաններից 3,000 »
Տիկ. Մարգ. Աբեխեանից թաւշեայ վարագոյրի արժէքը 352 »

Ս. Կաֆեանից արծաթապատ աւետարան 30 րուբլի
Սառա Գասպարեանից արծաթապատ աւետարաններ 55 „
արժողութեամբ, տիկ. Կատարինէ Քեանդարեանից 1 հատ միւռոնի շիշ 25 րուբլի և այլ մանր նուէրներ մինչև 4000 րուբլու։

15) Հոգաբարձութիւնս վերջացնելու համար իր ասելիքը՝ պարտք է համարում յայտնել, որ, շնորհիւ հին պարտքերի (մօտ 2,500 ր.) այս տարի մօտ 3600 րուբլի դեֆիցիտով է փակում իր հաշիւները, բացի այդ՝ կայ և եկեղեցու դրան ցանկապատը շինելու ծախքը, որը անհրաժեշտ է որքան կարելի է շուտ շինել տալ։ Այս բոլորը աչքի առաջ ունենալով՝ հոգաբարձութիւնս, որպէս անմիջական փրկարար ելք՝ առաջարկում է ընդունել ծխական տուրքի սկզբունքը վերջնականորէն և գործադրել այն։

Հոգաբարձութեան նախագահ՝ Ց. Մելիք-Բախտամեան

Երեցփոխ՝ Ց. Քալանթարեան

| | |
|---|---|
| Անդամք Հոգաբարձութեան | Տիկ. Եղ. Արծրունի<br>Բժ. Բ. Աղասարեան<br>Ց. Սալէնղիարեան |

Քարտուղար՝ Գ. Նիկոլեան

---

# ՀԱՇԻՒ

## ՔԱՄՈՅԵԱՆՑ ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑՒՈՅ

### ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ

## 1912 Թ.

### ԵՒ ՆԱԽԱՀԱՇԻՒ 1913 Թ.

# ՀԱՇԻՒ ԴՐԱՄԱՐԿՂԻ

| Մ Ո Ւ Տ Ք | Ռուբ. | Կ. | Ռուբ. | Կ. |
|---|---|---|---|---|
| Մնում է կանխիկ առ 1-ն Յունվարի 1912 թ. | — | — | 102 | 28 |
| ՏԱՐԻԱՑ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՏԱՑՒԱԾ Է | | | | |
| I Կրպակավարձ | | | | |
| * 1. Կվայչաձէից 12 ամսական . . | 1933 | 34 | | |
| 2. Ցէյտլինից » » . . | 1500 | — | | |
| 3. Մայզելսօնից » » . . . | 1200 | — | | |
| 4. Եանըքեանից » » . . . | 2400 | — | | |
| 5. Գէրմանից » » . . . | 1200 | | | |
| 6. Բերուչևից » » . . . | 600 | - | 8833 | 34 |
| II Գնահատական եւ արքունական հարկեր | | | | |
| 1. Ստացւած է կրպակավարձերից սոյն տարւայ գնահատական և արքունական հարկերի աւելացրած մասը ըստ պայմանի . . . . . | — | — | 407 | 42 |
| III Ջրի վարձ | | | | |
| 1. Ստացւած է կրպակավարձերից . . | — | — | 76 | — |
| IV Լուսագնից | | | | |
| 1. Լուսագին մկրտութեան, պսակի, ննջեցեալի և այլ օրինակատարութիւնների համար ստացւած է . . . . | — | — | 601 | 60 |
| V Մոմավաճառումից | | | | |
| 1. 14 փութ. 26¾ ֆունտ մոմի վաճառումից ստացւել է արդիւնք . . | 732 | 75 | | |
| 2. Մոմավաճառութեան ժամանակ նւիրաբերութիւններ . . . . | 214 | 15 | 946 | 90 |
| ՓՈԽԱՆՑՈՒՄՆ. . | — | — | 10967 | 54 |

* Սեպտեմբերից աւելացրած է նրա վարձը տարեկան 200 րուբլի:



| Ե Լ Ք | Ռուբ. | Կ. | Ռուբ. | Կ. |
|---|---|---|---|---|
| ՏԱՐԻԱՑ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎՃԱՐՒԱԾ Է | | | | |
| I Պարտքեր | | | | |
| 1. Կալւածքների անցեալ և այս տարւայ պարտքի հանգուցման հաշւից . . | | | 1500 | — |
| II Գնահատական եւ արքունական հարկեր | | | | |
| 1. Քաղաքային գնահատական և արքունական հարկեր կայքերի . . . | — | — | 996 | 01 |
| III Քաղաքային վարչութեան | | | | |
| 1. Ջրից օգտւելու վարձը ամբողջ տարւայ ընթացքում . . . . | — | — | 48 | 87 |
| IV Վճարւած 0/0 0/0-ներ. | | | | |
| 1. Փոխատու վարկի ընկ. վճարւած է Կվայչաձէի գրաւականով վերցրած 300 րուբլու 6 ամսեայ 0/0 0/0-ները . . | — | — | 9 | 90 |
| V Նպաստ Քամոյեան-Ս. Գէորգ եկ. դպրոցին | | | | |
| 1. Տարւայ ընթացքում տրւած է նպաստ. . | 6925 | 75 | | |
| 2. Բնակարանի վարձ դպրոցի՝ տարւայ ընթացքում . . . . . | 1200 | — | 8125 | 75 |
| VI Մանր ծախսեր եկեղեցու | | | | |
| * 1. Տարւայ ընթացքում եղած են մանր ծախսեր և վճարած է հնից մնացած պարտքեր. | — | — | 452 | 06 |
| VII Լուսաւորութիւն | | | | |
| 1. Եկեղեցու ելէքտրական լուսաւորութեան . | — | — | 60 | 30 |
| ՓՈԽԱՆՑՈՒՄՆ . | | | 11192 | 89 |

* Սոյն ծախուց մէջն են ածուխը, նաւթը, վառելափայտը, տեղեկագրերի տպագրելը և այլն:

# ՀԱՇԻՒ ԴՐԱՄԱՐԿՂԻ

| ՄՈՒՏՔ | Ռուբ. | Կ. | Ռուբ. | Կ. |
|---|---|---|---|---|
| ՓՈԽԱՆՑՈՒՄՆ . . | — | — | 10967 | 54 |
| VI Հին նիւթերի վաճառումից | | | | |
| 1. Վաճառուեց քանդուած խանութից մնացած երկաթը . . . . . | — | — | 7 | — |
| VII Թոշակադրամ | | | | |
| 1. Քամոյեան-օր. դպրոցի սանուհիներից ուսման թոշակավարձ 1912 թ. . | — | — | 933 | — |
| VIII Նուիրատուներից | | | | |
| 1. Մանթաշեանի ժառանգներից համաձայն իրանց հօր կտակի . . . | 1000 | — | | |
| 2. Եղբ. Քամոյեաններից ի յիշատակ իրանց հանգուցեալ մօր. . . . | 100 | — | | |
| * 3. Եղբ. Քամոյեաններից եկեղեցու խաչկալի և Ս. Սեղանի վրայի նկարի համր. ստացուած ընդհանուր գումարը . . . | 4700 | — | | |
| 4. Յովհ. Յակոբեան Քամոյեանից ի յիշատակ իւր հանգուցեալ ամուսնու՝ յօգուտ դպրոցիս չքաւոր աշակերտուհիների . | 100 | — | | |
| ** 5. Եղբ. Բօղարջեաններից իրանց նուիրաբերած 3000 րուբլու մնացորդը . . | 1436 | — | | |
| 6. Տիկ. Նազարբէկեանից յօգուտ եկեղեցու իւր աթոռի վարձ . . . | 5 | - | | |
| 7. Գրիգոր Մ. Առաֆէլեանից ստացուած է յօգուտ եկեղեցու հինգ հազար րուբլի . | 5000 | — | 12341 | — |
| ՓՈԽԱՆՑՈՒՄՆ. . | | | 24248 | 54 |

* Տես արձանագրութիւն № 56.

** Տես արձանագրութիւն № 57.



| ԵԼՔ | Ռուբ. | Կ. | Ռուբ. | Կ. |
|---|---|---|---|---|
| ՓՈԽԱՆՑՈՒՄՆ . | — | — | 11192 | 89 |
| VIII Ռոճիկներ պաշտօնեաների | | | | |
| 1 Յովհ. աւ. քահ. Մարտիրոսեանին 1911 թ. 214 ր. 1912 թ. 30 րուբլի . . | 252 | — | | |
| 2 Յովսէփ քահ. Տէր-Պետրոսեանին 1911 թ. 179 ր. 60 կոպ. 1912 թ. 30 ր. . | 209 | 60 | | |
| 3 Միքայէլ Սրկ. Տէր Յարութիւնեանին 1911 թ. 45 ր. 1912 թ. 265 ր. . . . | 310 | — | | |
| 4 Գործավարին 1911 թուից 15 ր. . . | 375 | — | | |
| 5 Թեմական Տեսչի ռոճիկների հաշւին 1911 թ. 170 ր. 53 կոպ. 1912 թ. 79 ր. 47 կ. | 250 | — | | |
| 6 Գործակալական ռոճիկ 1911 թւի. . | 40 | — | | |
| 7 Այրի Տիկ. Լազարեանի կենսաթոշակի հաշւից 1911 թ. 60 ռ. 1912 թ. 85 ռ. . | 145 | — | | |
| 8 Եկեղեցու ծառայողներին 1911 թ. մնացորդ 20 ր. 1912 թ. 439 ր. 33 կ. . | 459 | 33 | | |
| 9 Եկեղեցու երկու դպիրներ Սարգիս Յովհաննիսեանին և Մկրտիչ Յովհաննիսեանին 11 ամսական ռոճիկ . . | 275 | — | 2315 | 93 |
| IX Անակնկալ ծախսեր | | | | |
| 1 Եկեղեցու բացման առթիւ նահանգական ճարտարապետ հրաւիրելու ծախսեր . | 18 | 10 | | |
| 2 Եփրեմ Սրբազանին եկեղեցւոյ օծման համր. նուէր տրուած . . . . | 100 | — | | |
| 3 Յ. Յ. Քամոյեանցի կնոջ թաղման պսակի . | 25 | — | | |
| 4 Բօղարջեանների մօր թաղման պսակի . | 25 | — | | |
| 5 Կօնսիստորիային կաթողիկոսի ընդունելութեան համր. . . . . | 50 | — | 218 | 10 |
| X Դիւանական ծախսեր | | | | |
| 1 Կօնսիստորիային չափաբերական մատեանների . . . . | — | — | 10 | — |
| ՓՈԽԱՆՑՈՒՄՆ . . | | | 13736 | 92 |

ԳՐԱԴԱՐԱՆ

# ՀԱՇԻՒ ԴՐԱՄԱՐԿՂԻ

| Մ Ո Ւ Տ Ք | Ռուբ. | Կ | Ռուբ. | Կ. |
|---|---|---|---|---|
| ՓՈԽԱՆՑՈՒՄՆ . . | | | 24248 | 54 |
| IX Նուիրատուութիւններ եկեղեցու շինութեան մասնակցողներից | | | | |
| 1. Անտրէօլէտտիից . . . . | 1189 | 78 | | |
| 2. Կաւլինսկուց (энергія) . . . . | 136 | 50 | | |
| 3. Ծատուրեանից . . . . | 317 | 90 | | |
| 4. Գէորգի Բանայեօղովից . . . | 50 | 47 | | |
| 5. Սարգիս Յովհաննիսեանից . . . | 32 | 46 | 1727 | 11 |
| X Տուգանքներ | | | | |
| 1. Ստացւեց եկեղեցու երկու ծառայողներից իրանց պարտականութիւնները ճշտիւ չի կատարելնուն համար տուգանք . | — | — | 1 | — |
| ՀԱՇԻԵԿՇԻՌ . . | | | 25976 | 65 |

| Ե Լ Ք | Ռուբ. | Կ. | Ռուբ. | Կ. |
|---|---|---|---|---|
| ՓՈԽԱՆՑՈՒՄՆ . . | — | — | 13736 | 92 |
| XI Եկեղեցու կայքերի եւ անօթների նորոգութիւն | | | | |
| 1. Հին գրքերը կազմելու Յակոբեանին . | 16 | 80 | | |
| 2. Սաղաւարտները և ժամաշապիկները նորոգելու | 24 | — | | |
| 3. Մայզելսօնի խանութի նորոգութիւն . | 5 | — | | |
| 4. Եկեղեցու տանիքը ներկելու . . | 18 | — | 63 | 80 |
| XII Երգեցիկ խմբի. | | | | |
| 1. Երգեցիկ խմբին տարւայ ընթացքում 6 ամիս 3 շաբաթ երգելու։ . . | — | — | 530 | — |
| XIII Եկեղեցու գոյքի. | | | | |
| 1. Գնուած է եկեղեցու համար . . . | — | — | 48 | 83 |
| XIV Նուէրներ. | | | | |
| 1. Տօների առթիւ սպասաւորներին է տւած | — | — | 31 | — |
| XV Գրաւականներ | | | | |
| 1. Վերադարձւեց Կազովսկուն իր գրաւականը կանխիկ դրամով . . . . | — | — | 70 | — |
| XVI Նորակառոյց եկեղեցի | | | | |
| 1. Տարւայ ընթացքում ծախսւած է եկեղեցու վերաշինութեանը և վճարւած է պարտքեր. | | | 8260 | 88 |
| Մնացորդ առ 1-ն. Յունվարի 1913 թ. . | | | 3235 | 22 |
| ՀԱՇԻԵԿՇԻՌ . . | | | 25976 | 65 |

Հաշւապահ՝ Գ. Նիկոլեան

Հոգաբարձութեան Նախագահ՝ Ց. Մելիք-Բախտամեան

Հոգաբարձուներ՝ { Տիկ. Ե. Արծրունի
Բժ. Բ. Աղասարեան.
Յովհ. Սալէնդիարեան.

Երեցփոխ՝ Ց. Քալանթարեան

Վերստուգիչ Յանձ-ի անդամներ { Գ. Գալստեան
Գ. Աստւածատրեան

| Ա Կ Տ Ի Ւ | Ռուբ. | Կ. | Ռուբ. | Կ. |
|---|---|---|---|---|
| ԱՌ 1-Ն ՅՈՒՆՎԱՐԻ 1913 Թ. | | | | |
| I Կանխիկ դրամով | | | | |
| 1. Դրամարկղում. | — | — | 3235 | 22 |
| Մոմ | | | | |
| 2. Մնում են ամբողջ և կիսավառ մոմեր . | — | — | 23 | 75 |
| II Գրաւականներ | | | | |
| % % ԲԵՐ ԹՂԹԵՐՈՎ | | | | |
| 1. 4 հատ 5%-բեր օբլիգացիաներ սերիյ 26. №№ 20.316,17, 18,19 Դվորեանսկի բանկի ստացած Մայղեւսոնից á 75 րուբլի . | 300 | — | | |
| 2. 1 հատ խաղատոմս III-րդ փոխառութեան № 0.8264/17 ստացւած Կվայչաձէից բորսայի գնով . | 300 | — | | |
| ՄՈՒՐՀԱԿՈՎ | | | | |
| 3. 1 հատ. մուրհակ գրաւականի փոխարէն ստացւած Բերուչևից . | 100 | — | 700 | — |
| III Ստանալիքներ | | | | |
| 1. Սրբ. Նշան եկեղեցուց . | 1000 | — | | |
| 2. Տէր Զաքարեանից . | 412 | 66 | | |
| 3. Տաուզլևից կատար. Թերթով № 17.076 . | 266 | 06 | | |
| 4. Տիկ. Սօֆիա Լազարեանից կատ. Թերթ. № 18.649 . | 179 | 21 | | |
| 5. Ջալալեանից կատար. Թերթով № 65.007. | 7223 | 85 | | |
| 6. Տէր Յովհ. ա. քահ. Մարտիրոսեանից իր ռոճիկների հաշւոյն աւելորդ ստացածը | 7 | 50 | 9089 | 28 |
| Ստանալիքը հանած պարտքից մնում է վճարելիք . | | | 12599 | 72 |
| ԳՈՒՄԱՐ . | | | 25647 | 97 |



| Պ Ա Ս Ս Ի Ւ | Ռուբ. | Կ. | Ռուբ. | Կ. |
|---|---|---|---|---|
| I վճարելիք գրաւականներով % %-բեր Թղթերով | | | | |
| 1. Մայղելսօնին 4 հատ 5 %-բեր դվօրեանսկի բանկի օբլիգացիաներ à 75 րուբլի . | 300 | — | | |
| 2. Կվայչաձէին 1 խաղատոմս III-րդ փոխառութեան բորսայի գնով . | 300 | — | | |
| Մ Ո Ւ Ր Հ Ա Կ Ո Վ | | | | |
| 3. 1 հատ մուրհակ Բերուչևին . | 100 | — | 700 | — |
| II գրաւականներ կանխիկ դրամով | | | | |
| 1. Եանըքեանին . | 400 | — | | |
| 2. Ցէյտլինին . | 140 | — | | |
| 3. Գերմանին . | 200 | — | 740 | — |
| III վճարելիք բանկին | | | | |
| 1. Գրաւ է դրւած փոխատու վարկի ընկ. եկեղեցու կրպակները 25,000 րուբլու, որից մնում է մայր պարտք . | 23907 | 97 | | |
| 2. Թիֆլիզի I փոխ. վարկի ընկ. Կվայչաձէի գրաւականով ստացւած գումարը . | 300 | — | 24207 | 97 |
| ԳՈՒՄԱՐ . | | | 25647 | 97 |



Гос Библиотека ՀՍՍՌ-Арм. ССР им. А. Мясникяна

## ՄՈՒՏՔ — Նորակառոյց եկեղեցու վերաշինութեան հաշիւ — ԵԼՔ

### ՄՈՒՏՔ

| | Ռուբ. | Կ. | Ռուբ. | Կ. |
|---|---|---|---|---|
| 1912 Թուին դրամարկղի հաշուից փոխադրուած է եկեղեցու կառուցման հաշուին . . | — | — | 8260 | 88 |
| Գումար . . | | | 8260 | 88 |

Նախագահ՝ Յ. Մելիք-Բախտամեան

Հոգաբարձուներ՝ { Տիկ. Ն. Արծրունի; Բժ. Բ. Աղասարեան; Յովհ. Սպէնդիարեան }



### ԵԼՔ

| | Ռուբ. | Կ. | Ռուբ. | Կ. |
|---|---|---|---|---|
| 1912 ԹՈՒԻՆ ՎՃԱՐՈՒԱԾ Է ՀԵՏԵՒԵԱԼ ՎԱՐՊԵՏՆԵՐԻՆ | | | | |
| 1. Անդրէօլետտուն . . . . | 3539 | 78 | | |
| 2. Գէորգի Բանայեօղլին սալայատակելու . | 120 | 47 | | |
| 3. Սարգիս Յովհաննիսեանին ցեմենտի գործերի | 82 | 46 | | |
| 4. Ֆէթվաճեանին . . . . | 1000 | — | | |
| 5. Ծատուրեանին ի հաշիւ ջահերի . | 1206 | 35 | | |
| 6. Զուրաբեանին (ճարտարապետ) . . | 150 | — | | |
| 7. Ախվերդովին՝ ապակիների համար. . | 100 | — | | |
| 8. Պուշքին վարագոյրի արմատուրա շինելուն . | 40 | — | | |
| 9. Ռէյշին (ներկարար) . . . . | 78 | — | | |
| 10. Դաւիտովին պատկերը մաքրելու . | 15 | — | | |
| 11. Գր. Մարտիրոսեանին ի հաշիւ պահարանների, գրակալների և այլն . . | 290 | — | | |
| 12. Օքրոկվէրցխովին վարագոյրի համար պախրոմայի և այլն . . . | 45 | 50 | | |
| 13. Գէրշովին՝ վառարանների հմր . . | 134 | 75 | | |
| 14. Կէսնէրին դռների և այլն . . . | 350 | — | | |
| 15. Զանազան վարպետների . . . | 169 | 87 | | |
| 16. Վրաց ազնուականների գրասենեակին ելէքտրականութեան միացնելու . . | 24 | 20 | | |
| 17. Խարազեանին զանգերը կախելու . . | 50 | — | | |
| 18. Օհանեանցին կերոններ և այլն . . | 12 | — | | |
| 19. Մալաճխներին աթոռների հմր. . . | 66 | — | | |
| 20. Բաշինջաղեանին (նկարիչ) . . . | 200 | — | | |
| 21. Կարլինսկուն (энергія) . . . | 486 | 50 | | |
| 22. Մալեանցին զգեստների հմր. . . | 65 | — | | |
| 23. Մալխասեանցին պղնձեայ մոմակալների. | 10 | — | | |
| 24. Գալստեանին գնուած գրքերի հմր. . | 25 | — | 8260 | 88 |
| ԳՈՒՄԱՐ . . | | | 8260 | 88 |

Երեցփոխ՝ Յ. Քալանթարեան

Հաշուապահ՝ Գ. Նիկոլեան

Վերստուգիչ Յանձ-ի անդամներ { Գ. Գալստեան; Գ. Աստուածատրեան }

# ՀԱՇԻՒ ԿՇԻՌ

## ՔԱՄՈՅԵԱՆ—Ս. ԳԷՈՐԳ ՕՐ. ԴՊՐՈՑԻ 1912 Թ.

### ՄՈՒՏՔ

| | Ռուբ. | Կ. | Ռուբ. | Կ. |
|---|---|---|---|---|
| Մնացորդ առ 1-ն Յունվարի 1912 Թ. . | — | - | 82 | 32 |
| Աշակերտուհիների ուսման վարձից 1912 Թ. | 933 | — | | |
| Քամոյեան Ս. Գէորգ օր. դպրոցի հոգաբարձութիւնից նպաստ դպրոցի . . | 5992 | 75 | 6925 | 75 |
| Ընդհանուր գումարն է . | — | — | 7008 | 07 |

Քամոյեան—Ս. Գէորգ օր.

### ԵԼՔ

| | Ռուբ. | Կ. | Ռուբ. | Կ. |
|---|---|---|---|---|
| 1912 Թ. Ուսուցչական խմբին վճարուած է . | 6389 | 50 | | |
| Դպրոցի սպասաւորին տարեկան վճարուած է | 300 | — | | |
| Բժշկական հսկողութեան համար վճարուած է 6 ամսւան . . . . . | 40 | — | | |
| Դպրոցական ծախքեր՝ վառելիք և այլն տարեկան . . . . . | 187 | 30 | 6916 | 80 |
| Մնացորդ առ 1-ն Յունվարի 1913 Թ. . | | | 91 | 23 |
| Ընդհանուր գումարն է . | — | — | 7008 | 07 |

դպրոցի տեսուչ՝ Գ. Վարդանեան

# ՄՈՒՏՔ   Նախահաշիւ Թիֆլիզի Քամոյեան — Ս. Գէորգ եկեղեցու 1913 թւի.

| № № | ԵԿԵՂԵՑՈՒ ԵԿԱՄՈՒՏԸ | 1912 թ. | | 1913 թ. | | Աւելի | | Պակաս | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Մնացորդ առ 1-ն Յունվարի 1913 թ. դրամարկղում . | — | — | 3235 | 22 | — | — | — | — | |
| 2 | Մնում է ամբողջ և կիսավառ մոմեր . . . | — | — | 23 | 75 | — | — | — | — | |
| | I Շրջան մշտական մտից | | | | | | | | | |
| 3 | Կրպակներից և այլ շինութիւններից . . . | 8833 | 34 | 8233 | 34 | — | — | 600 | — | Այս եկամուտը պակասում է, որովհետև Կվայչաձէից 1913 թ. չորս ամսւայ վարձը ստացուած է որպէս աւանս 1912 թւին: |
| 4 | Ջրի վարձ ստացուած է կրպակավարձերից . . | 76 | — | 76 | — | — | — | — | — | 1911 թ. ստացւել էր 36 ռուբ., իսկ 1912 թ. սկսած ստացւում է 76 ռուբլի: |
| | II Շրջան | | | | | | | | | |
| 5 | Մոմավաճառութիւնից . | 946 | 90 | 946 | 90 | — | — | — | — | Լուսագնի և մոմավաճառի մուտք դրուած է նախահաշւում այնքան, որքան ստացուած է 1912 թ. |
| 6 | Լուսագին և այլ օրինակատարութիւններից . | 601 | 60 | 601 | 60 | — | — | — | — | |
| | III Շրջան | | | | | | | | | |
| 7 | Կրպակավարձերից գնահատ. և արքունական հարկերի աւելացրած մասը . . | 407 | 42 | 482 | 12 | 74 | 70 | — | — | Համաձայն կապալառուների պայմանագրերի: |
| | IV Շրջան | | | | | | | | | |
| 8 | Թոշակավարձ Քամոյեան — Ս. Գէորգ օր. դպրոցի աշակերտուհիներից . | 933 | — | 1200 | — | 267 | — | — | — | Աչքի առաջ ունենալով դպրոցի տեղափոխութիւնը սպասւում է աւելի: |
| | V Շրջան | | | | | | | | | |
| 9 | Մշտական նուէր իւրաքանչիւր տարի Յովհ. Յակ. Քամոյեանից . . . | 100 | — | 100 | — | — | — | — | — | |
| | VI Շրջան | | | | | | | | | |
| 10 | Եկեղեցու հին նիւթերի վաճառումից . . . . | 7 | — | 50 | — | 43 | — | — | — | |
| | | 11905 | 26 | 14948 | 93 | 384 | 70 | 600 | — | |
| | ԴԵՖԻՑԻՏ . . | | | 3593 | 31 | — | — | — | — | Դեֆիցիտը հոգ-րս. որոշել է ծածկել ծխական տուրքով: |

## ԵԼՔ Նախահաշիւ Թիֆլիզի Քամոյեան— Ս. Գէորգ եկեղեցու 1913 Թւի

| № | ԵԿԵՂԵՑՈՒ ԾԱԽՍԸ | 1912 թ. | | 1913 թ. | | Աւելի | | Պակաս | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I Շրջան | | | | | | | | |
| 1 | Ռոճիկ Սարկաւագի . | 310 | — | 240 | — | — | — | 70 | — |
| 2 | » 2 դպիրների . | 275 | — | 300 | — | 25 | — | — | - |
| 3 | » ժամկոչին և կնոջը . | | | 240 | — | — | — | — | — |
| 4 | » դռնապանին . . | 459 | 33 | 120 | — | — | — | 99 | 33 |
| | II Շրջան | | | | | | | | |
| 5 | Հաշւապահ-քարտուղար-գործավարին . . . | 375 | — | 360 | — | — | — | 15 | — |
| 6 | Կոնսիստորիայի փաստաբանին. | 50 | — | 50 | — | — | — | — | — |
| 7 | Ռոճիկ գործակալին . . | 40 | — | 40 | — | — | — | — | — |
| 8 | Հանգուցեալ օր. Լազարեանի մօրը կենսաթոշակ տարեկան . . . | 180 | — | 180 | — | — | — | — | — |
| 9 | Երգեցիկ խմբին 4 ամիսը 80 ական րուբլի, 5 ամիսը 40 ական ռուբլի . . | 530 | — | 520 | — | — | — | 10 | — |
| | III Շրջան | | | | | | | | |
| 10 | Քամոյեան եկեղ. ծխակ. դպրոցին նպաստ . . . | 6925 | 75 | 7340 | — | 414 | 25 | — | — |
| 11 | Բնակարանավարձ դպրոցին . | 1200 | — | 1200 | — | — | — | — | — |
| 12 | Թեմական տեսչին դպրոցի բիւջէի 3% . . | 250 | -- | 255 | — | — | — | 5 | — |
| 13 | Եկեղեցու և դպրոցի Նորոգութեան . . . | 63 | 80 | 500 | — | 436 | 20 | — | — |
| 14 | Եկեղեցու լուսաւորութեան . | 60 | 30 | 60 | 30 | — | — | — | — |
| 15 | Մանր ծախսեր. . . | 452 | 06 | 452 | 06 | — | — | — | — |
| | ՓՈԽԱՆՑՈՒՄՆ . . | 11171 | 24 | 11857 | 36 | 875 | 45 | 199 | 33 |

Միք. սրկ.ռոճիկը պակասեցրած է 1912 թ. Մայիսից, և վճարւել է ամսական 20 ր.

Դպիրները 1912 թ. ստացան 11 ամսական՝ եկեղեցու բացումից սկսած։

Այս 459 ր. 33 կ-ից. 20 ր. վճարւել է 1911 թ. մնացորդ պարտքը, իսկ մնացորդ 439 ր. 33 կոպէկի փոխարէն 1913 թ. տրւելու է 360, ուրեմն ծախքը 79 ր. 33 կ. պակասելու է.

Առ 1-ն Ցունվարի 1912 թ. Նրան համնում էր 1911 թ. հաշւին 15 ր։ Սինօդի կարգադրութեան համաձայն։

Համաձայն 1911 թ. Ցունիսի 12-ի ծխ. ժող. որոշման ստանալու է տարեկան 180 ր.։

Սոյն յաւելումը առաջացել է VI դասարանի բացման պատճառով 7 դասի դասագնի և Տեսչի ու վերակացուի ռոճիկների յաւելումով։

Եթէ դպրոցը հարկ լինի տեղափոխել՝ ըստ պայմանի պարտաւոր ենք նորոգել և այնպէս յանձնել։

Եկեղեցու բացումից յետոյ մի քանի ծախսեր աւելացել են, օրինակ, փայտ, ածուխ, նաւթ և այլն։

| № № | ԵԿԵՂԵՑՈՒ ԾԱԽՍԸ | 1912 թ. | | 1913 թ. | | Աւելի | | Պակաս | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ՓՈԽԱՆՑՈՒՄՆ . . | 11171 | 24 | 11857 | 36 | 875 | 45 | 199 | 33 | |
| | IV Շրջան | | | | | | | | | |
| 16 | Գնահատական հարկեր . | 471 | 70 | 516 | 50 | 44 | 80 | — | — | Այս տարի գնահատակ. և արքունական հարկերը աւելացել են։ |
| 17 | Արքունական և զեմսկիյ . | 668 | 36 | 713 | 86 | 45 | 50 | — | — | |
| 18 | Կալւածքի պարտքի հանգուցումն . . . | 1472 | 18 | 1500 | — | 27 | 82 | — | — | Կալւածքի պարտքի հանգուցման 1912 թ. հաշուին վճարւած է 1000 ր., 500 ր. 1911 թ. մնացորդն էր, այնպէս որ դեռ մնում է 1912 թւից վճարելիք % % ով մօտ 800 րուբլի: |
| 19 | Անշարժ կայքերի ապահովագրութ. . . | 50 | 61 | 50 | 61 | — | — | — | — | Ապահովագրութեան ծախս թէև դրւել է նախահաշւում, բայց չի վճարւել հոգ. կողմից, այլ փոխ. վարկի ընկ. է վճարում։ |
| | V Շրջան | | | | | | | | | |
| 20 | Եկեղեցու մշտական ֆոնդ եկամուտի 10/0 ը . . | — | — | 300 | — | — | — | — | — | Համաձայն հոգ. որոշման։ Տես 48-րդ նիստի արձանագրութիւնը։ |
| 21 | Դպրոցներում ընդհ. բժշկական հսկողութիւն մտցնելու համար պահեստ հիմնելու գործին փոխարինաբար . . | — | — | 100 | — | — | — | — | — | Համաձայն հոգ. որոշման։ Տես 50-րդ նիստի արձանագրութիւնը։ |
| 22 | Դպրոցիս չքաւոր աշակերտուհիներին հագուստներ և այլ կարիքներ հոգալու համար. . | — | — | 100 | — | — | — | — | — | Համաձայն հոգ. որոշման։ Տես 49-րդ նիստի արձանագրութիւնը։ |
| | VI Շրջան | | | | | | | | | |
| | Մնացորդ պարաքեր, ռոճիկներ. | | | | | | | | | |
| 23 | Միքայէլ Սրկ. Տէր-Յարութիւնեանին . . | — | — | 15 | — | — | — | — | — | Առ 1-ն Յունվարի 1913 թ. վճարելի ռոճիկներ։ |
| 24 | Այրի Տիկ. Ղազարեանին . . | — | — | 95 | — | — | — | — | — | |
| 25 | Գործակալին . . | — | — | 40 | — | — | — | — | — | |
| 26 | Կոնսիստորիայի փաստաբանին. 3 տարւայ. . . | — | — | 150 | — | — | — | — | — | |
| 27 | Փոխ. Վարկ. Ընկ. . . | — | — | 792 | 32 | — | — | — | — | |
| 28 | «Մշակ» ի գրասենեակին հին պարտք. . . | — | — | 10 | — | — | — | — | — | Առ 1-ն Յունվարի 1913 թ. վճարելի պարտքեր։ |
| 29 | Արքունական պարտքեր վերջին տեղեկ. համաձ. . | — | — | 598 | 67 | — | — | — | — | |
| | | 13834 | 09 | 16839 | 32 | 993 | 57 | 199 | 33 | |

| № № | ԵԿԵՂԵՑՈՒ ԾԱԽՍԸ | 1912 Թ. | | 1913 Թ. | | Աւելի | | Պակաս | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ՓՈԽԱՆՑՈՒՄՆ . . | 13834 | 09 | 16839 | 32 | 993 | 57 | 199 | 33 |
| | VII Շրջան | | | | | | | | |
| | ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՆՈՒԹԻՒՆԻՑ ՄՆԱՑԱԾ ՊԱՐՏՔԵՐ | | | | | | | | |
| | «Միլա»-ին պատկետելու հաշւից | — | — | 650 | — | — | — | — | — |
| | Մարտիրոսեանին . . | — | — | 142 | — | — | — | — | — |
| | Կէմնէրին. . . . | — | — | 105 | — | — | — | — | — |
| | Եկեղեցու անօթեղէններ վաճառող ընկ. այս տարւայ վճարելիք մասը . | — | — | 600 | — | — | — | — | — |
| | Գանինին . . . . | — | — | 71 | 40 | — | — | — | — |
| | Եղիազարեանին . . . | — | — | 46 | 47 | — | — | — | — |
| | Եւանգուլեանին. . . | — | — | 25 | — | — | — | — | — |
| | Վունտէրլիխ-ին . . . | — | — | 27 | — | — | — | — | — |
| | Ռէյշին . . . . | — | — | 15 | — | — | — | — | — |
| | Ախվէրտովին . . . | — | — | 6 | 05 | — | — | — | — |
| | Մալեանցին (դերձակ). . | — | — | 15 | — | — | — | — | — |
| | | 13834 | 09 | 18542 | 24 | 933 | 57 | 199 | 33 |

Առ 1-ն Յունուարի 1913 Թ. վճարելիք պարտքեր

Նախագահ՝ Յ. Մելիք-Բախտամեան

Երեցփոխ՝ Յ. Քալանթարեան

Հոգաբարձուներ՝
- Տիկ. Ն. Արծրունի
- Բժ. Բ. Աղասարեան
- Յովհ. Սպէնդիարեան

Հաշւապահ՝ Գ. Նիկոլեան

# ՆԱԽԱՀԱՇԻՒ
## ՔԱՄՈՅԵԱՆ-Ս. ԳԷՈՐԳ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ 1913 Թ.

### ՄՈՒՏՔ

| | | Ռ. | Կ. | Ռ. | Կ. |
|---|---|---|---|---|---|
| | 1913 Թ. I կիսամեակ. Յունվ.-Յունիս գանձելի | 500 | — | | |
| | „ II „ Սեպտ.-Յունվ գանձելի | 700 | — | 1200 | — |
| | Հոգաբարձութիւնից նպաստ. . . | | | 7340 | — |
| | ԸՆԴՀ. ՄՈՒՏՔՆ Է . . | | | 8540 | — |

Քամոյեան Ս. Գէորգ Օր. Դպրոցի

Նախագահ՝ Ց. Մելիք-Բախտամեան

Հոգաբարձուներ՝ { Տիկ. Եղ. Արծրունի / Բժ. Բ. Աղասարեան / Յովհ. Սպէնդիարեան

### ԵԼՔ

| | | Ռ. | Կ. | Ռ. | Կ. |
|---|---|---|---|---|---|
| | Դասագլին վճարելու է . . . | | | | |
| 1913 | Յունվ.-Սեպտ. II բ. 8 ամս. համար (28 դ. 40 ր.) | 746 | 67 | | |
| „ | Սեպտ-Դեկտ „ I բ. 4 ամս. համար (21 դ. 40 ր.) | 280 | — | 1026 | 67 |
| „ | Ամբողջ տարւայ III բ. (30 դ. 40 ր.) . | | | 1200 | — |
| „ | „ „ IV բ. ( „ „ ) . | | | 1200 | — |
| „ | „ „ V բ. ( „ „ ) . | | | 1200 | — |
| „ | „ „ VI բ. ( „ „ ) . | | | 1200 | — |
| „ | „ „ Տեսչական ռոճիկ . . | 600 | — | | |
| „ | „ „ Վերակացուհու . . | 360 | — | | |
| „ | „ „ Ծառայի „ . . | 300 | — | 1260 | — |
| „ | „ „ Դպրոցական ծախսեր . . | | | 213 | 33 |
| „ | „ „ Բնակարանի վարձ . . | | | 1200 | — |
| „ | Վեց ամսւայ բժշկի այցելութեան | | | 40 | — |
| | ԸՆԴՀ. ԵԼՔՆ Է . . | | | 8540 | — |

Տեսուչ՝ Գ. Վարդանեան

Երեցփոխ՝ Ց. Քալանթարեան

Հաշւապահ՝ Գ. Նիկոլեան.

ՀՀ Ազգային գրադարան
NL0108804